

ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՐԱՑՈՒՄԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՈՒ ԲՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՈՒՄԸ

ԲԱՌԻԿ ՄԻՐՁՈՑԱՆ

Զարգացած սոցիալիզմի պայմաններում տնտեսական միխանիզմի կատարելագործմանն ուղղված միջոցառումների մեջ հատուկ ուշադրություն է դարձվում նյութական բարիքների արտադրության պլանավորման, գնահատման և խթանման տնտեսական ցուցանիշների համակարգի ճիշտ ընտրությանը:

Ժողովրդական տնտեսության բոլոր օղակներում հասարակական արտադրության արդյունավետության հաշվարկման նպատակով օգտագործվում են ինքնավարության ցուցանիշներ՝ աշխատանքի արտադրողականությունը, ֆոնդահատույցը, նյութատարությունը, աշխատատարությունը, շահութաբերությունը, մեկ ուրբու ապրանքային արտադրանքին ընկնող ծախսումները, շրջանառության ծախսերի մակարդակը և այլն, որոնց որոշման հիմքում ընկած են արտադրանքի ծավալային, արժեքային ցուցանիշները: Արտադրանքի ցուցանիշների միջոցով համամասնություններ են սահմանվում վերարտադրության առանձին փուլերի՝ արտադրության և սպառման, արտադրության և փոխանակության, արտադրության և բաշխման, ինչպես նաև սպառման և կուտակման, արտադրության միջոցների և սպառման առարկաների արտադրության, ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի (արդյունաբերության ու գյուղատնտեսության, շինարարության, տրանսպորտի, շրջանառության ոլորտի ճյուղերի և այլնի) միջև: Դրանց միջոցով տերիտորիալ, միջճյուղային և ներ-ճյուղային համամասնություններ են սահմանվում:

Արտադրական միավորումների, ձեռնարկությունների տնտեսական գործունեության արդյունքների պլանավորման, գնահատման, հաշվառման վերլուծության նպատակով օգտագործվում են արտադրանքի մի շարք ծավալային, արժեքային ցուցանիշներ, որոնցից հիմնականներն են՝ համախառն շրջանառությունը, համախառն, ապրանքային, իրացված արտադրանքը, գուտ արտադրանքը (իր տարատեսակներով), մշակման նորմատիվային արժեքը, նորմատիվային աշխատատարությունը, նորմատիվային աշխատավարձը և այլն: Ներկայումս ծավալային համախառն արժեքային ցուցանիշների համակարգում առաջնությունը տրվում է իրացված արտադրանքի ցուցանիշին՝ հաշվի առած պայմանագրային պարտավորությունների կատարումը, որն անմիջական կապ է ստեղծում արտադրանքի բնական և արժեքային ցուցանիշների միջև:

1965 թ. տնտեսական բարեփոխության արտադրական միավորումների և ձեռնարկությունների տնտեսական գործունեության պլանավորման, գնահատման և խթանման հիմնական ծավալային ցուցանիշ սահմանվեց իրացված արտադրանքի ծավալը, որը փոխարինեց համախառն արտադրանքին. վերջինս դարձավ հաշվարկային: Իրացված արտադրանքի ցուցանիշն արտահայտում է տվյալ ժամանակաշրջանում ժողովրդատնտեսական շրջանառության մեջ մտած և սպառողների կողմից վճարված արտադրանքի ընդհանուր ծավալն արժեքային արտահայտությամբ: Տնտեսական գործունեությունն իրացված արտադրանքի ցուցանիշով գնահատելիս ձեռնարկությունները ձգտում էին թողարկել առավել շահութաբեր արտադրատեսակներ: Այն դեպքում, երբ բարձր շահութաբերություն ապահովող արտադրանքը ձեռք էր բերվում միջոցների արդյունավետ օգտագործման, արտադրության ռացիոնալ կազմակերպման, մասնագիտացման խորացման հետևանքով, այսինքն, վերջին հաշվով աշխատանքի արտադրողականության բարձրացման շնորհիվ, ձեռնարկության շահերը համա-

պատասխանում էին հասարակության շահերին: Իրացված արտադրանքի ծավալը որպես արտադրատնտեսական գործունեության զնահատման հիմնական ցուցանիշ սահմանելիս ենթադրվում էր, որ այն հնարավորություններ կստեղծի ձեռք առնելու և բավարարելու ժողովրդական տնտեսության և բնակչության պահանջները: Բայց կապված այն հանգամանքի հետ, որ այս ցուցանիշը հիմնականում կախված է արտադրանքի մեծածախ գների մակարդակից, առանձին ձեռնարկություններ աշխատում են իրացված արտադրանքի պլանային առաջադրանքները կատարել ի հաշիվ արտադրության պլանային անվանացանկի (տեսականու) խախտման: Միավորումների, ձեռնարկությունների համար արտադրանքի պլանային տեսակներն սահմանվում է խմբային անվանացանկով: Հաճախ ձեռնարկությունները պահպանելով ամբողջությամբ վերցրած պլանային անվանացանկը, աշխատում էին ներխմային տեսակներին խախտելով առաջնություն տալ ավելի շահութաբեր արտադրատեսակների թողարկմանը: Իրացման ծավալի ընդհանուր պլանային առաջադրանքի կատարման ղեկավար քողարկվում էր ձեռնարկությունների կողմից ըստ անվանացանկի արտադրության պլանի թերակատարման փաստը: Արդյունքում շահերի գույքակցման փոխարեն առաջանում էր հակասություն ամբողջությամբ հասարակության և ձեռնարկությունների, միավորումների կողակտիվների միջև: Մի կողմից ձեռնարկության կողակտիվը տնտեսապես խրախուսվում էր իրացված արտադրանքի ընդհանուր ծավալի պլանային առաջադրանքի կատարման համար, իսկ մյուս կողմից հասարակությունը վնաս էր կրում որոշ սպառողների մոտ ավելորդ արտադրանքի, կամ էլ առևտրական կազմակերպություններում բնակչության կողմից պահանջարկ չլայնող ապրանքների կուտակման և մնացած սպառողների նկատմամբ մատակարարման պլանների թերակատարման պատճառով: Վերջինս հաստատվում է այն փաստով, որ զրեթե ամեն տարի մանրածախ առևտրական ցանցում գերնորմատիվային ապրանքային պաշարների գումարը կազմում է 3—4 միլիարդ ռուբլի:

Իրացված արտադրանքի ցուցանիշի մի շարք թերություններ կապված էին նրա կադմավորման և զնահատման պայմանների հետ: Իրացված արտադրանքի ցուցանիշի կադմավորումը բաղկացած է երկու փուլից: Առաջին փուլում մատակարարը գնորդին է առաջում տնտեսական պայմանագրով նախատեսված համապատասխան քանակի, տեսականու և որակի արտադրանք, որին հաջորդում է գնորդին բեռնված ապրանքի համար վճարման ենթակա հաշիվ ներկայացնելը: Գնորդն իր հերթին ստացված արտադրանքը ընդունում է քանակական և որակական ստուգում կատարելուց հետո: Նրա համաձայնությունը ապրանքի արժեքը վճարելիս արտահայտվում է վճարման պահանջագրերի ակցիայտուովով: Այս պահից սկսած փաստորեն մատակարարը լրիվ կատարել է իր պայմանագրային պարտավորությունները:

Երկրորդ փուլում գնորդը մատակարարին վճարում է արտադրանքի արժեքը, որն ավարտվում է հաշվարկային կամ հատուկ փոխատվության հաշվից գումարի փոխանցումով մատակարարի հաշվին:

Այս բոլորից հետո արտադրանքը վերջնականապես համարվում է իրացված և մատակարարին իրավունք է տրվում այն մտցնելու իրացված արտադրանքի ծավալի մեջ: Ինչպես տեսնում ենք, իրացման պրոցեսի տևողությունը բավականին երկար է և բազմաստիճան: Այն կախված է մատակարարի և գնորդի համատեղ գործունեությունից: Ժողովրդական տնտեսության տեսանկյունից դիտելիս արտադրական միավորման, ձեռնարկության արտադրանքի իրացման պրոցեսն ավարտվում է առաջին փուլում, իսկ երկրորդ փուլում իրացվում են առանձին վերցրած մատակարարի տնտեսաշարակային շահերը, քանի որ ապրանքի արժեքի վճարումից հետո են պայմաններ ստեղծվում փոխհատուցելու արտադրության ծախսերը և ապահովելու նորմալ շահութաբերություն՝ տնտեսական գործունեության հետագա ծավալման նպատակով: Շատ հաճախ զնորդի մոտ վճարման համար անհրաժեշտ դրամական միջոցներ չլինելու պատճառով տուժում էր մատակարարը: Այս պարագայում իրացված արտադրանքի ցուցանիշը լրիվ չի արտահայտում մատակարարի կատարած աշխա-

տանքի արդյունքը և որպես տնտեսական գործունեության գնահատման չափանիշ թերի է:

Ուշադրության է արժանի այն փաստը, որ մի շարք արտադրական ձեռնարկություններ, միավորումներ հաջողությամբ կատարելով իրացված արտադրանքի ծավալի և կարևորագույն անվանացանկի պլանային առաջադրանքները, թույլ չէին տալիս պայմանագրային պարտավորությունների խախտումներ և լրիվ չէին բավարարում ժողովրդական տնտեսության, բնակչության պահանջները՝ միաժամանակ համարվելով առաջավորներ: Ամբողջությամբ վերցրած շարժարացվեցին այն հույսերը, որ կապվում էին իրացված արտադրանքի ցուցանիշի օգտագործման հետ: Ընթացիկում էր, որ այն հնարավորություն կստեղծի ճիշտ հաշվի առնելու գնորդների պահանջները և թողարկելու բարձրորակ արտադրանք: Սակայն կյանքը ցույց էր տալիս, որ իրացման ցուցանիշը լրիվ չափով չի կատարում այդ ֆունկցիան, կապված այն բանի հետ, որ կիրառվում էր որոշ արտադրատեսակների պակասի պայմաններում, որի հետևանքով սպառողները ի վիճակի չէին ընտրություն կատարելու, ներգործելու մատակարարների վրա:

Իրացված արտադրանքի ցուցանիշի օգտագործումը շոշափելի փոփոխություններ չմտցրեց արտադրության համաշափության մեջ: Էական թերություններ էին նկատվում արտադրության և աշխատանքի կազմակերպման, ուղղակի տեղական տնտեսական կապերի կազմակերպման և պայմանագրային պարտավորությունների կատարման գործում:

Մինչև 1972 թ. իրացված արտադրանքի ծավալի պլանային առաջադրանքը կատարված էր համարվում այն դեպքում, երբ արտադրանքը ընդունվել էր գնորդի կողմից և արժեքը լրիվ վճարվել անկախ այն հանգամանքից, թե այդ մատակարարումը նախատեսված է եղել պլանով, տնտեսական պայմանագրով կամ իջեցված կարգագրերով: Այսպիսի գնահատման դեպքում ձեռնարկությունները խտրություն չէին դնում միջոցների օգտագործման մեջ և ամեն կերպ աշխատում էին ինչ զնով էլ լինի կատարելու իրացված արտադրանքի սահմանված պլանը, թեկուզ այդ ձեռք էր բերվում պլանային տեսականու և պայմանագրային պարտավորությունների կոպիտ խախտման ճանապարհով: Հետագայում իրացված արտադրանքի ցուցանիշի այդ թերի կողմը վերացնելու նպատակով 1972 թ. ժողովրդական սպառման ապրանքների, իսկ 1974 թ. նաև արտադրատեսակական նշանակման արտադրանքի գծով սահմանվեց արտագրական միավորումների, ձեռնարկությունների տնտեսական գործունեության պլանավորման և գնահատման նոր կարգ՝ տնտեսական պայմանագրերի համաձայն արտադրանքի անվանացանկի և տեսականու մատակարարման առաջադրանքների և պարտավորությունների վերաբերյալ: Այսինքն սահմանվում էր նոր ցուցանիշ՝ արտադրանքի իրացման ծավալը հաշվի առնելով տնտեսական պայմանագրերով նախատեսված արտադրանքի կոնկրետ անվանացանկի մատակարարման պարտավորությունների կատարումը: Իրացված արտադրանքի պլանի կատարման գնահատման այսպիսի մոտեցումը կարևոր միջոցառում էր արտադրական միավորումների, ձեռնարկությունների տնտեսական պատասխանատվության բարձրացման գործում: Ցավոք սրտի, սահմանված այս կարգը երկար ժամանակ բավարար կիրառություն չգտավ և համապատասխան մարմինները ստիպված այս հարցին կրկին անդրադարձան: ՍՍՀՄ սլետպլանի, պետբանկի, ՍՍՀՄ աշխատանքի և սոցիալական հարցերի պետական կոմիտեի, ՍՍՀՄ ֆինանսների մինիստրության և ՀԱՄԿԽ-ի 1977 թ. օգոստոսի 17-ի համատեղ որոշմամբ («Արտադրանքի մատակարարումների առաջադրանքների կատարման հաշվառման և գնահատման կարգը») սահմանվեց, որ կնքված պայմանագրերով և կատարման համար ընդունված կարգագրերով նախատեսված քանակի, անվանացանկի (տեսականու) և ժամկետների արտադրանքի մատակարարման առաջադրանքների և պարտավորությունների թերակատարման դեպքում արտադրական միավորումների, ձեռնարկությունների, ինչպես նաև մատակարարման կազմակերպությունների ղեկավար աշխատողները ղրկվում են հիմնական տնտեսական գործունեության արդյունքների

համար տրվող պարգևից՝ կախված այդ առաջադրանքների և պարտավորությունների թերակատարման աստիճանից: Այս որոշումը գործողության մեջ դրվեց 1978 թ. սկզբից: Արտադրանքի իրացման ծավալը, հաշվի առած մատակարարումների պարտավորությունների կատարումը, որոշելիս իրացված արտադրանքի պլանային ծավալից հանվում է թերամատակարարված արտադրանքի արժեքը և այնուհետև հաշվարկվում է արտադրանքի իրացման պլանի կատարման աստիճանը:

Արտադրանքի մատակարարումների առաջադրանքների կատարման հաշվառման և գնահատման նոր կարգը կոչված էր նպաստելու պայմանագրային հարաբերությունների ամրապնդմանը, ձեռնարկության նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը, արտադրանքի որակի բարձրացմանը, ժողովրդական տնտեսության և բնակչության պահանջարկների աճելի լրիվ բավարարմանը:

Անցած տարիների փորձը ցույց տվեց, որ մեր հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ տնտեսական պայմանագրերով և կարգադրերով նախատեսված անհրաժեշտ քանակի, անվանացանկի (տեսականու) և որակի արտադրանքի մատակարարման առաջադրանքների ու պարտավորությունների կատարումը դեռևս զգալիորեն ետ է մնում սահմանված պլանային առաջադրանքներից: Փաստերը ցույց են տալիս, որ մատակարարումների գծով սահմանված կոնկրետ պարտավորությունների կատարումը, որպես կանոն, զգալիորեն ետ է մնում ընդհանուր ծավալով իրացված արտադրանքի պլանի կատարման աստիճանից, ընդ որում թերամատակարարումներ թույլ տված արտադրական միավորումների, ձեռնարկությունների գրեթե 70 %-ը միաժամանակ կարողանում է հաջողությամբ կատարել իրացված արտադրանքի ընդհանուր ծավալի պլանը¹:

Վերջին տարիներին մեր հանրապետության արդյունաբերության մեջ իրացված արտադրանքի ծավալի պլանային առաջադրանքների կատարումը հաշվի առած պայմանագրերով ստանձնած պարտավորությունները, բնութագրվում են հետևյալ տվյալներով.

Իրացված արտադրանքի պլանի կատարումը Հայկական ՍՍՀ

արդյունաբերության մեջ

Տարիներ	Իրացված արտադրանքի պլանի կատարման աստ.		Մատակարարումներով ստանձնած պարտավորությունները թերակատարող ձեռնարկությունները		Թերակատարված արտադրանքի գումարը մլն. ռ.
	ընդհանուր ծավալով	հաշվի առած մատակարարումներով ստանձնած պարտավորությունները	թիվ	տոկոսով ընդհանուրի հանդեպ	
1979 թ.	101,1	97,8	124	28,5	99,4
1982 թ.	101,8	97,5	150	33,4	135
1983 թ.	102,2	97,7	136	29,6	133,5
1984 թ.	102,4	99,2	85	18,3	49,5

Ինչպես տեսնում ենք աղյուսակի տվյալներից, 1984 թ. թերամատակարարված արտադրանքի ծավալը, 1979 թ. համեմատությամբ, կրճատվել է գրեթե 2 անգամ, իսկ թերամատակարարում թույլ տվող միավորումների, ձեռնարկությունների թիվն ընդհանուրի հանդեպ իջել է 10,2 %-ով: Չնայած նկատ-

¹ Այս և հետագա բոլոր տվյալները վերցված են ՀՍՍՀ կենտրոնական վիճակագրական վարչությունից:

վող դրական տեղաշարժերին, թերամատակարարումները դեռևս մեծ չափերի են հասնում, եթե հաշվի առնենք ոչ միայն դրանց արժեքը, այլև սպառողական արժեքը, քանի որ սպառողին վերջին հաշվով հետաքրքրում է պահանջմունքների բավարարման աստիճանը: Արտադրանքի իրացման ծավալի ցուցանիշը (հաշվի առած պայմանագրային պարտավորությունների կատարումը) անմիջական կապ է ստեղծում արտադրանքի բնական և արժեքային ցուցանիշների միջև:

1983 թ. ապրիլին ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշմամբ սահմանվեց նոր կարգ, ըստ որի պայմանագրով նախատեսված արտադրանքի մատակարարումները համարվում են ճյուղային մինիստրությունների, արտադրական միավորումների, ձեռնարկությունների տնտեսական գործունեության զնաչառման գլխավոր ցուցանիշներից մեկը: Պայմանագրով նախատեսված արտադրանքի թերակատարումը որակավորվում է որպես պլանային և պետական կարգապահության լուրջ խախտում: Արտադրական կոնկրետիվների նյութական խթանումը սերտորեն կապվում է նրանց կողմից պայմանագրերի, պատվերների լրիվ և ժամանակին ապահովելու հետ: Սոցիալիստական մրցության արդյունքներն ամփոփելիս մատակարարումների պլանի կատարումը հանդես է դալիս որպես հիմնական, կարևորագույն ցուցանիշ: Նախկինում պայմանագրային պարտավորությունների կատարումը թերացումը տնտեսականիով (անվանացանկով) առանձնապես նյութական դժվարություններ չէր ստեղծում արտադրող, մատակարարող միավորումների, ձեռնարկությունների համար, քանի որ պարզեցված համակարգը հնարավորություն էր տալիս պարզեցնել վճարելի միանգամայն տարբեր աղբյուրների հաշվին՝ նոր տեխնիկայի ներդրման, կարևորագույն առաջադրանքների կատարման, նյութերի խնայողության, սոցիալիստական մրցության մեջ հաղթող ճանաչվելու և այլ միջոցառումների համար: Բացի այդ, արտադրական միավորումների, ձեռնարկությունների մեծ մասում կնքված տնտեսական պայմանագրերին և պատվերներին համապատասխան, մատակարարումների առաջադրանքների թերակատարումը գրեթե չէր ազդում նրանց խրախուսման ֆոնդերի մեծության վրա, քանի որ արտադրանքի թերակատարման համար շահույթից կատարվող հատկացումների պակասեցումը չեզոքացվում էր աշխատանքի արտադրողականության աճի և որակի բարձր կարգ ունեցող արտադրանքի տնտեսարար կշռի բարձրացման համար նյութական խրախուսման ֆոնդին կատարվող լրացուցիչ հատկացումների ավելացմամբ:

Պայմանագրային պարտավորությունների խախտման դեպքում, մեր կարծիքով, նպատակահարմար է արտադրական միավորումների, ձեռնարկությունների ստացած և վճարած տույժի, տուգանքների դումարի դրական տարբերության 30—40 % -ը հատկացնել նյութական խրախուսման ֆոնդին՝ աշխատողների նյութական շահագրգռվածության և պատասխանատվության բարձրացման նպատակով:

ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1983 թ. հուլիսի 14-ի «Պլանավորման և տնտեսական գործունեության ասպարեզում արդյունաբերության արտադրական միավորումների (ձեռնարկությունների) իրավունքների ընդլայնման և աշխատանքի արդյունքների համար նրանց պատասխանատվության ուժեղացման լրացուցիչ միջոցառումների մասին» որոշմամբ տնտեսական մեխանիզմի հետագա կատարելագործման նպատակով 1984—1985 թթ. արդյունաբերության մի շարք առաջատար ճյուղերում անց է կացվում խոշոր մասշտաբի տնտեսական գիտափորձ: Դրա նպատակն է բարձրացնել հասարակական արտադրության արդյունավետությունը՝ արտադրության ինտենսիվացման, գիտատեխնիկական առաջադիմության արագացման, աշխատանքի վերջնական արդյունքների ապահովման ճանապարհով արտադրական միավորումների, ձեռնարկությունների տնտեսական պատասխանատվության և շահագրգռվածության ուժեղացման հիման վրա: Տնտեսական գիտափորձի պայմաններում աշխատող արտադրական միավորումների, ձեռնարկությունների տնտեսական գործունեության զնաչառումը և սոցիալիստական մրցության ար-

դյունքների ամփոփումն իրականացվում են ամենից առաջ իրացված արտադրանքի պլանային ծավալի հիման վրա, անվանացանկով (տեսականիով), որակով և սահմանված ժամկետներում, ելնելով կնքված պայմանագրերին (պատվերներին) համապատասխան մատակարարումների պարտավորությունների կատարումից: Արտադրանքի մատակարարումների ծավալը հանդես է գալիս որպես արտադրական միավորումների, ձեռնարկությունների տնտեսական գործունեության գնահատման վերջնական արդյունքի ցուցանիշ: Ուժեղացվում է ապրանքադրամական, տնտեսաշվարկային հարաբերությունների ազդեցությունը միավորումների, ձեռնարկությունների արտադրական ծբագրերի կազմման վրա և բարձրացվում մատակարարների, սպառողների և նյութատեխնիկական մատակարարման մարմինների, առևտրի փոխադարձ պատասխանատվությունը պայմանագրային պարտավորությունների անվերապահ կատարման համար:

Պայմանագրային պարտավորությունների անթերի կատարումը տնտեսության համամասնական և հաշվեկշռված զարգացման, աշխատադրողական ծախսերի և կորուստների կրճատման, վերջնական ժողովրդատնտեսական արդյունքների ապահովման անհրաժեշտ պայմանն է: Արտադրանքի թերափութակարարումները ցանկացած սահմաններում խախտում են հասարակական արտադրության նորմալ ընթացքը: Արտադրանքի մատակարարումների պլանային առաջադրանքների կատարման ժամանակ անհիմն է արտադրանքը բաժանել հիմնական և երկրորդական անվանացանկի:

Մատակարարումների կարգապահության ամրապնդման տեսանկյունից խիստ կարևոր է այնպիսի հարցերի լուծումը, ինչպիսիք են բոլոր պատվերների կատարումը անկախ մատակարարումների ծավալից և արտադրանքի բեռնման ժամկետների համապատասխանեցումը գնորդների պահանջներին: Արտադրական միավորումների, ձեռնարկությունների տնտեսական գործունեությունը գնահատելիս առաջին հերթին պետք է ելնել յուրաքանչյուր արտադրատեսակի մատակարարման աստիճանից և եթե թույլ է տրվել որևէ արտադրանքի մատակարարման թերացում, ապա ձեռնարկության գնահատականը պետք է տրվի դրանից ելնելով: Պայմանագրային պարտավորությունների կատարման ամփոփ ցուցանիշը պետք է ընդգրկի բոլոր պարտավորությունների կատարման տոկոսը անկախ մատակարարումների ծավալից՝ փոքր լինի այն, թե մեծ: Անհրաժեշտ է ստեղծել այնպիսի տնտեսական պայմաններ, երբ մատակարարը խտրություն չունի մատակարարման տեսակետից շահավետ և ոչ շահավետ արտադրանքի նկատմամբ: Պահանջվում է արագացնել արտադրական միավորումների, ձեռնարկությունների համար արտադրանքի անվանացանկի մշակման և հաստատման աշխատանքները, անվանացանկ, որի հիման վրա սպառողները և մատակարարող-իրացող կազմակերպությունները կարող են կնքել իրենց անհրաժեշտ արտադրանքի մատակարարման պայմանագրեր, իհարկե, առանձնացված ֆոնդերի սահմաններում: Այն տնտեսական կապերը ամուր հիմքի վրա դնելու կարևոր միջոց է: Դեռևս մի շարք միևնույնություններ, գերատեսչություններ այդպիսի անվանացանկ իրենց ենթակա արտադրական միավորումների, ձեռնարկությունների համար չեն հաստատել: Մատակարարումների կարգապահության ամրապնդմանը կարելի է հասնել միայն այն ժամանակ, երբ արտադրական միավորումների, ձեռնարկությունների ղեկավար աշխատողներին պարզեցատրում կտրվի 100 տոկոսով պայմանագրային պարտավորությունները կատարելիս, ընդ որում այս կարգը աստիճանաբար պետք է տարածել ժողովրդական տնտեսությունների բոլոր ճյուղերի միավորումների, ձեռնարկությունների վրա: Դեռևս ժողովրդական տնտեսության մի շարք ճյուղեր գործնականորեն պատասխանատվություն չեն կրում մատակարարումների խախտման համար (տրանսպորտ, կապ և այլն): Անհրաժեշտ է վերանորոգման, էներգիա, ջուր, գազ, գոլորշի մատակարարող կազմակերպությունների արտադրատնտեսական գործունեության գնահատումը և տնտեսական խթանումն իրականացնել ելնելով առաջին հերթին սպառողների հանդեպ ստանձնած պարտավորությունների կատարման աստիճանից: Մատակարար-

յումների պարտավորությունների կատարման վրա բացասաբար է ազդում արտադրության պլանների և նյութական ռեսուրսների ու բեռների փոխադրումների ծավալի անհամապատասխանությունը:

Նկատենք, որ ոչ բոլոր դեպքերում է արդյունավետ ընդհանուր ծավալով արտադրանքի արտադրության պլանային առաջադրանքների կատարումը, երբ լրիվ չեն բավարարվում առանձին սպառողների պահանջները: Միշտ չէ, որ պլանային առաջադրանքների դերակատարումն ապահովում է արտադրության արդյունավետության համապատասխան բարձրացում: Ժողովրդական տնտեսությանը և բնակչությանը վերջին հաշվով հետաքրքրում է ոչ միայն իրացված արտադրանքի ընդհանուր ծավալը, որն անհրաժեշտ է ընդլայնված վերարտադրության արժեքային համաձայնությունները պահպանելու համար, այլև կոնկրետ ապրանքի սպառողական արժեքը: Այս առումով արտադրանքի մատակարարումների ծավալը ճիշտ է բնութագրում ժողովրդական տնտեսության և բնակչության պահանջմունքների բավարարման աստիճանը և որակը: Այն իր մեջ ամփոփում է ինչպես արտադրանքի ընդհանուր ծավալն արժեքային արտահայտությամբ, այնպես էլ բնական ձևը՝ սպառողական արժեքը և հաշվի է առնում նաև ժամանակի գործոնը: Արտադրանքի մատակարարումների ծավալի ցուցանիշն անհամեմատ ավելի լրիվ է արտահայտում տնտեսական գործունեության վերջնական արդյունքները, արտադրողների և սպառողների տնտեսական շահերի զուգակցումը, ապրանքի արժեքի և սպառողական արժեքի միասնությունը, վերարտադրության պրոցեսի առանձին փուլերի փոխադարձ կապը, քան արտադրանքի իրացման ցուցանիշն ընդհանրապես վերցրած: Արտադրանքի մատակարարումների ցուցանիշը կարևոր տեղ է զբաղեցնում տնտեսական կապերի համակարգում: Այն մի կողմից բնութագրում է արտադրանքի շարժը. բնաձևով, իսկ մյուս կողմից իրացումը՝ արժեքի փոփոխությունը, որի ընթացքում ապրանքն արտադրության պրոցեսից անցնում է շրջանառության ոլորտը և դրանով իսկ ավարտվում է արտադրության փուլը: Արտադրանքի մատակարարումների ծավալի ցուցանիշը արդյունաբերությունը սերտորեն կապում է շրջանառության ոլորտի հետ և հիմք ծառայում արտադրության ու ապրանքաշրջանառության մի շարք ցուցանիշների: Ճիշտ պլանավորման համար Գոյություն ունեցող կարգի համաձայն, պայմանագրային պարտավորությունների կատարման հաշվառումը կատարվում է բեռնման պահից, իսկ արտադրանքի իրացման ծավալը հաշվի է առնվում գնորդի կողմից արտադրանքի արժեքը վճարելու պահից սկսած: Ինչպես տեսնում ենք այս երկու ցուցանիշների միջև էական տարբերություններ են նկատվում: Կնքված պայմանագրերին համապատասխան մատակարարումների պլանի կատարումը դեռևս զգալիորեն ետ է մնում մյուս պլանային ցուցանիշների կատարման մատակարարից: Այսպես իրացման և մատակարարման պլանների միջև տարբերությունը զգալի մեծություն է կազմում: Ներկայումս ամբողջությամբ վերցրած ՄՄՀՄ արդյունաբերության մեջ մատակարարումների դժով ստանձնած պարտավորությունները լրիվ չեն կատարում ձեռնարկությունների մեկ երրորդ մասը: Անհամեմատ աճել է պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարող արտադրական միավորումների, ձեռնարկությունների թիվը Հայկական ՄՄՀ-ում: 1984 թ. դրանց տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ հասավ 81,7 %-ի, 1979 թ. 71,5 %-ի դիմաց: Տեսականորեն հնարավոր է, որ միավորումը, ձեռնարկությունը արտադրանքի մատակարարման պլանը լրիվ կատարի, այսինքն՝ լրիվ ապահովի պայմանագրերով նախատեսված արտադրանքի առաքումը, իսկ արժեքի վճարումը այս կամ այն պատճառով ձգձգվի գնորդի կողմից, այսինքն արտադրանքի իրացման պլանը չկատարվի: Այս դեպքում ճիշտ կլինի սերտ կապ ստեղծել արտադրանքի մատակարարումների ծավալի և իրացված արտադրանքի ծավալի ցուցանիշների միջև: Այս երկու ցուցանիշների միջև եղած տարբերությունը պետք է կազմի օբյեկտիվորեն անհրաժեշտ այն ժամանակը, որը կապված է ապրանքը նշված վայրը հասցնելու և վճարման փաստաթղթերը բանկում ձևակերպելու հետ: Պայմանագրային պարտավորությունների կատարման հաշվառման գոյություն ունեցող կարգը, որ

գործում է նաև տնտեսական գիտափորձի պայմաններում, երբ մատակարարումների պլանի կատարումը գնահատվում է տարվա սկզբից աճող հանրագումարով, արտադրական միավորումներին, ձեռնարկություններին հնարավորություն է տալիս տարվա ընթացքում այս կամ այն պատճառով խախտել մատակարարումների կարգապահությունը: Հետագայում՝ մինչև տարվա վերջը, լրացնելով այդ թերամատակարարումները, արտադրական միավորումների, ձեռնարկությունների պայմանագրային պարտավորությունները ամբողջությամբ կատարված են համարվում և թույլատրվում է նյութական խթանման ֆոնդին հատկացումները կատարել լրիվ՝ 15 %-ի չափով: Կարծում ենք այդպիսի մոտեցումը թերի է: Ճիշտ կլիներ թերամատակարարում թույլ տված ամիսներին նյութական խթանման ֆոնդին միավորուման, ձեռնարկության, հատկացումները համասյակային կտրվածքով պակասեցնել՝ թերամատակարարված արտադրանքի արժեքի համապատասխան տոկոսի չափով: Այս դեպքում արտադրական միավորումները, ձեռնարկությունները կձգտեն հասնել արտադրության համաչափությանը և ուշի ուշով կհետևեն պայմանագրային պարտավորությունների անթերի կատարմանը:

Տնտեսական գիտափորձի պայմաններում արտադրության և արտադրանքի բաշխման պլաններն արտադրական միավորումներին, ձեռնարկություններին պետք է հասցվեն նախապլանային տարվա օգոստոս ամսին, այն հաշվով, որ հնարավոր լինի մինչև պլանային տարին սկսելը պայմանագրեր կնքել և արտադրությանը նախապատրաստվել: Տնտեսական պայմանագրերի կնքմանը պետք է հաջորդի արտադրության պլանների հաստատումը և ոչ թե հսկառակը: Արտադրության պլաններն իրական բովանդակություն կարող են ստանալ միայն այն դեպքում, երբ բոլոր տնտեսական պայմանագրերը կնքված լինեն ծավալուն անվանացանկով: Միաժամանակ հարկ է նշել, որ տնտեսական գիտափորձի պայմաններում ավելորդ է դառնում միավորումների, ձեռնարկությունների արտադրատնտեսական գործունեության գնահատումը բնական արտահայտությամբ՝ կարևորագույն արտադրատնտեսական արտադրության ցուցանիշով: Մատակարարումների կարգապահության ամրապնդումը ենթադրում է պայմանագրային պարտավորությունների խախտման դեպքում տնտեսական սանկցիաների պարտադիր կիրառում, առանց կողմերի փոխադարձ գիշման: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ թերամատակարարված արտադրանքի ծավալի և վճարած տույժի, տուգանքների գումարի միջև բացակայում է անմիջական կապը: Մի կողմից պայմանագրային պարտավորությունների թերամատակարարման պատճառով կիրառվող տնտեսական սանկցիաները չեն փոխհատուցում միավորումներին, ձեռնարկություններին հասցրած վնասները, մյուս կողմից՝ ստացած և վճարած տույժի, տուգանքների գումարի պակասն արժեքների ամբողջությամբ փոխանցվում է պետական բյուջե: Այսպիսի մոտեցումը, կարծում ենք, չի նպաստում ձեռնարկությունների նյութական շահագրգռվածության և պատասխանատվության բարձրացմանը՝ պայմանագրային պարտավորությունների անթերի կատարման գործում:

ՍՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի նիստում ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական դարգացման 1985 թ. պետական պլանի և պետական բյուջեի նախագծերը քննարկվելիս հատուկ նշվեց, որ շատ ձեռնարկություններ և նույնիսկ որոշ ճյուղեր չեն կարողացել հասնել արտադրության կալուն աճ երաշխավորող արդյունքների, բնալ էլ ոչ բոլոր բնագավառներում է հաջողվել հաղթահարել թերացումները: Դա առանձնապես վերաբերում է արտադրանքի անվանացանկի գծով պլանի կատարմանը: Հարկավոր է ապահովել աշխատանքի համաշափությունը, արտադրանքի մատակարարումների պայմանագրային պարտավորությունների խստիվ կատարումը: Պետք է ասել, որ վերջին երկու տարում այստեղ հաջողվել է որոշ չափով շտկել վիճակը: Բայց խնդիրն այն է, որ պայմանագրերը կատարվեն լիովին և ամենուրեք²: Բնակչության սպառողական պահանջարկը լրիվ չի բավարարվում հատկապես բարձրորակ ապրանքներով:

Ճիշտ է, վերջին տարիներին հանրապետության թեթև և սննդի արդյունաբերության մինիստրությունները զգալի աշխատանք են կատարել պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելու ուղղությամբ, բայց այստեղ տիրող վիճակը դեռևս չի համապատասխանում առևտրի ներկայացրած պատվերներին: Հանրապետության թեթև և սննդի արդյունաբերության ճյուղի միավորումների, ձեռնարկությունների պայմանագրային պարտավորությունների կատարման մասին պատկերացում է տալիս հետևյալ աղյուսակը:

Հայկական ՍՍՀ քիմ. և սննդի արդյունաբերության մինիստրությունների և ներառվող իրացված արտադրանքի գլանի կատարումը 1979—1984 թթ.

Տարիներ	Իրացված արտադրանքի կատարման աստիճանը		Մատակարարումներով ստանձնած պարտավորությունները թերակատարող ձեռնարկությունները		Թերակատարված արտադրանքի գլան մարդ. մլն. ս.
	բնական	խառն	հաշվի առած մատակարարումներով ստանձնած պարտավորությունները	թիվ	տուկոով ընդհանուրի հանդեպ
Քեթև արդյունաբերության մինիստրություն					
1979 թ.	101,3	97,6	27	79,4	23,7
1982 թ.	101,5	97,8	24	80,0	28,2
1983 թ.	100,6	96,1	19	43,7	52,1
1984 թ.	101,9	99,1	6	15,4	12,8
Սննդի արդյունաբերության մինիստրություն					
1979 թ.	98,9	97,7	11	26,2	17,1
1982 թ.	105,7	97,6	6	21,4	15,5
1983 թ.	107,0	98,4	8	24,2	10,9
1984 թ.	106,6	99,6	6	15,8	2,5

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, հանրապետության թեթև և սննդի արդյունաբերության մինիստրությունները զգալիորեն բարելավել են արտադրանքի իրացման աշխատանքները: 1984 թ. ՀՍՍՀ թեթև արդյունաբերության մինիստրություն իրացված արտադրանքի՝ հաշվի առած մատակարարումներով ստանձնած պարտավորությունները և պլանային առաջադրանքը, կատարել է 99,1 %-ով, իսկ ՀՍՍՀ սննդի արդյունաբերության մինիստրությունը՝ 99,6 %-ով, 1979 թ. համապատասխանաբար 97,6 և 97,7 %-ների դիմաց: ՀՍՍՀ թեթև արդյունաբերության մինիստրությունում թերակատարում թույլ տվող միավորումների, ձեռնարկությունների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ քննարկվող ժամանակաշրջանում իջել է 64, իսկ ՀՍՍՀ սննդի արդյունաբերության մինիստրությունում՝ 10,4 %-ով:

Ամփոփենք. արտադրական միավորումների, ձեռնարկությունների արտադրատեսական գործունեությունը վերջին հաշվով կոչված է ծառայելու ժողովրդական տնտեսության և բնակչության պահանջարկների բավարարմանը: Այն ամենից առաջ արտահայտվում է արտադրանքի արտադրության, մատակարարման և իրացման մեջ: Տնտեսական գիտափորձի պայմաններում միավորումների, ձեռնարկությունների արտադրատեսական գործունեության արդյունքների համար պատասխանատվության բարձրացման հիմնական պայման առաջ է քաշվում պայմանագրային պարտականությունների կատարումը: Այսպիսով, արտադրանքի մատակարարումների կարգապահության ամրապնդումը կոմպլեքսային պրոբլեմ է, որի լուծումը սերտորեն առնչվում է ինչպես սոցիալիստական պլանավորման հետագա բարելավման, այնպես էլ ամբողջությամբ վերցրած տնտեսական մեխանիզմի կատարելագործման հետ:

РЕАЛИЗАЦИЯ ПРОДУКЦИИ И УДОВЛЕТВОРЕНИЕ ПОТРЕБНОСТЕЙ НАРОДНОГО ХОЗЯЙСТВА И НАСЕЛЕНИЯ

РАДИК МИРЗОЯН

Р е з ю м е

В условиях развитого социализма среди мер, направленных на совершенствование хозяйственного механизма, особое внимание уделяется правильному выбору системы показателей планирования, оценки и стимулирования промышленного производства. Обеспечение конечных народнохозяйственных результатов предполагает непрерывное совершенствование объемных, стоимостных показателей промышленной продукции. В настоящее время в системе объемных, валовых стоимостных показателей выделяется объем реализованной продукции с учетом выполнения договорных обязательств, который создает непосредственную связь между натуральными и стоимостными показателями продукции. Анализ фактических материалов промышленности Армянской ССР позволяет критически оценить производственно-хозяйственную деятельность, направленную на удовлетворение потребностей народного хозяйства и населения.